Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3940

ՀԵՐԱՍԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հատընտիր

891.995
Գ-63

891.995
Ա-63

ՀԵՐԱՍԵՍ ՇԱՐԱՀԱԼԻ



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏՈՒՄԱՆՅԱՆ

«ՄԱՐԶԵՏԱԿԱՆ ԳԻՐՔ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1984

ԳՄԴ 84Հ1
Ն 631

Կազմեց, տողացի թարգմանությունը
պատրաստեց և առաջաբանը գրեց
ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆԸ

Գեղարվեստական թարգմանությունը
ԷԴՈՒԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԻ

2004

Ներսես Շնորհալի

Ն 631 Հանելուկներ: Դպր. կրտսեր տարիքի համար: Կազմ., տողացի թարգմ. պատրաստեց և առաջաբանը գրեց Ա. Մադոյանը: Գեղարվեստ. թարգմ. Է. Ավագյանի: /Նկ.՝ Ա. Կարագյան.—Եր.: Սովետ. գրող, 1984. 32 էջ:

Միջնադարի ականավոր բանաստեղծ Ներսես Շնորհալին շատ հետաքրքիր հանելուկներ է գրել երեխաների համար: Գրքում տեղ գտած հանելուկները հրատարակվում են ժամանակակից հայերենով:

Ն 4803010200(122)
705(01)84 159 84 «S»

ԳՄԴ 84Հ1
ԱՐ 1

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1984

Հ 73244
Ն 705-84



եզնից ավելի քան 800 տարի առաջ ապրել և ստեղծագործել է մեծ մտածող, բանաստեղծ ու երգահան Ներսես Շնորհալին (1098—1173), որ նշանավոր Պահլավունի տոհմից էր: Նա մանուկների համար բազմաթիվ գործեր է գրել, որոնցով կարելի էր ազատ ժամանակը հաճելի դարձնել և անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել: Այդպիսիներից առանձնապես արժեքավոր են նրա երեք հարյուրի հասնող հանելուկները:

Ճոխ ու բազմաբովանդակ հայոց հին գրականությունը հարուստ է նաև հանելուկներով: Բավական է հիշել, որ V դարի բանաստեղծ Դավիթ Քերթողից մինչև XVIII հարյուրամյակը հանելուկ են գրել շուրջ չորս տասնյակ հեղինակներ: Այդ մեծ, անչափելի հարստության մեջ կարևորագույն տեղ ունեն Շնորհալու հանելուկները: Որոշակի ծրագրով ստեղծված սրամիտ, գողտրիկ այդ բանաստեղծություններում նա պատմում է կենդանական ու բուսական աշխարհի, բնական երևույթների, կենցաղային ու արհեստագործական առարկաների, գրականության ու մշակույթի, առասպելական ու պատմական դեմքերի (Տորք Անգեղ, Տրդատ և Վարազդատ թագավորներ, Մովսես Խորենացի և Դավիթ Անհաղթ փիլիսոփա) մասին:

Եթե նախորդ շրջանում հանելուկ գրում էին ազատ ոտանավորով, տարբեր չափ ու կշռույթով, ապա Ներսես Շնորհալին ստեղծեց դրա դասական տիպը, որ այնուհետև դարձավ ընդօրինակման առարկա: Եվ մեծ բանաստեղծի հանելուկների կաղապարով ուրիշները հանելուկ էին գրում նաև նրա մասին: Ահա դրանցից մեկը, որ հնարավորություն կտա պատկերացնելու, թե բնագրով ինչպես են հնչում հանելուկները.

Տնտես մի կայր խիստ պատուական,
Ճաշեր կազմէր յոյժ զանազան,
Մանկունքս ուտեն և զուարճանան
Եւ գիտութեամբ փարթամանան:

Ներսես Շնորհալու հանելուկները գրված են ժամանակի խոսակցական լեզվով, որը հետագայում դարձավ հայ քնարերգության լեզուն և այսօր հայտնի է «միջին հայերեն» անունով: Մանուկներին մատչելի դարձնելու նպատակով մի շարք հանելուկներ հրատարակում ենք աշխարհաբար:

նվում է ու մեծանում,
Հենց նույն օրն էլ՝ մահանում,
Հետո նորից կյանք առած
Պայծառ շորեր է հագնում:

(Արև)



մբողջ օրը տանը մնում,
Բեհեզ բարձի վրա քնում,
Հենց որ մուկ է տեսնում հանկարծ,
Բազեի պես որս է անում:

(Կատու)

ողն է մտնում, մահանում,
Հետո նորից կյանք առնում,
Աչքը հառած երկնքին,
Տարածվում է, շատանում:

(Յորեն)



որս ոտք ունի, բայց շուն չի,
Ջու է ածում, թռչուն չի,
Խոտ է ուտում կովի պես,
Պատյան ունի, բայց տուն չի:

(Կրիա)

Ձ ուն է սպիտակ, լայնատարած,
Սև հավիկներ մեջը թառած,
Խոսում են ու զրույց անում՝
Մարդու նման լեզու առած:

(Գիրք)



Մբողջ օրը քուն չունի,
Լայն դաշտերում տուն չունի,
Ծաղկից ծաղիկ է թռչում,
Փեթակ ունի, բուն չունի:

(Մեղու)



րքա չունեն, սակայն արագ
կազմում են մեծ, ահեղ բանակ,
Հենց մտնում են արտը հասած՝
Բերքն են հնձում առանց դանակ:

(Մորեխ)





իշերով է նա լույս տալիս,
Եվ ապրում է ճիշտ մեկ ամիս,
Կիսվում է նախ և նորանում,
Կլոր դեմքով՝ աշխարհ գալիս:

(Լուսին)



Տ եսա իմ հոգու հոգին
Հողում թաղվեց, մահացավ,
Շատ չարչարվեց ու կրկին
Ծիլ արձակեց, բարձրացավ,

Սրի բերան նա ընկավ,
Քարով ճզմվեց, փշրվեց,
Հետո բոցում այրվեց,
Նոր կյանք առած՝ ետ եկավ:

(Յորեն)

սկայական փռում թխած
Մի գաթա կա սիրուն, գլոր,
Թխողն ինչքան ծայրից պոկում,
Նորից է նա դառնում կլոր:

(Լուսին)

Ա որսորդ է չար ու անգութ,
Հագին մուշտակ՝ սիրուն, պուտ-պուտ,
ժանիքը սուր, ագին բարակ,
Եվ աչքերն են մի-մի ճրագ:

(Հովազ)



արտարագետ և իմաստուն,
Ծաղկի փոշուց շինում է տուն,
Լեզուն՝ քաղցր, ինքը՝ բարի,
Չունի դադար, հանգիստ ու քուն:

(Մեղու)





ի օձ կա մեծ, գույնը՝ կապույտ,
Հա՛ գնում է պտույտ-պտույտ,
Նրանով են սնվում անվերջ
Ծառ ու ծաղիկ, խոտ ու առվույտ:

(Գետ)



Ա  նուկն եկավ՝ պայծառ, անգին,
Կանաչ շորեր ունի հագին,
Թողեց հետքեր նա ամենուր,
Ծաղկով լցրեց դաշտն ու այգին:

(Գարուն)





ի տախտակ կա քառանկյուն,
Առանց դրա չկա տուն,
Մինչև ամուր չփակես՝
Դու չես մտնի հանգիստ քուն:

(Դուռ)



1035-84

ագին շորեր՝ կրակ ու բոց,
Գլխին ունի ոսկե սղոց,
Ձայնով հզոր՝ մութուլուսին
Արթնացնում է տուն ու փողոց:

(Աքաղաղ)



р բուրաստան ու պարտեզ,
Ուր ծաղիկներ, կանաչ սեզ,
Շրջում է նա օրնիբուն
Պոչը՝ գույն-գույն, ինքը՝ հեզ:

(Սիրամարգ)



ա ապրում է շարժուն տան մեջ,
Ծտի նման խայտում անվերջ,
Առավոտից մինչ իրիկուն
Չունի հանգիստ ու չունի քուն:

(Զուկ)

Երեկ տեսա մի քարավան
Ճամփա ելած՝ գնում էր Վան,
Պոչ-պոչ բռնած, շարքով կարգին,
Մի-մի հատիկ առած մեջքին:

(Մրջյուն)

Ի թռչուն կա շատ իմաստուն,
Բարեկամ է նա միշտ մարդուն,
Աղմկում է, ձայնեղ կանչում,
Երբ որ գող է մտնում իր տուն:

(Սագ)



ա մի գմբեթ՝ բարձր ու լայն,
Կանգնած աննյուն ու անգերան,
Մեջը կանթեղ՝ պայծառ լույսով,
Կախված ջահեր, առանց պարան:

(Երկինք)





ոսում է նա, լեզու չունի,
Շրջում է նա, ոտքեր չունի,
Բայց մտնում է ամեն մի տուն,
Ուրախ լուրեր բերում մարդուն:

(Նամակ)

յանք է տալիս, բայց ինքն անկյանք,
Հյուր է գալիս, աշխարհ մտնում,
Պարգևում է լույս ու բերկրանք,
երբ գնում է, օրն է մթնում:

(Արև)



Ռչուն անթև ու անփետուր,
Բայց շրջում է նա ամենուր,
Նրա համար սահման չկա
Ոչ գետ ու ծով, ոչ լեռ, բլուր:

(Միտք)



ողից շինեցին,
Բոցում թրծեցին,
Կախեցին սյունից,
Տարան, բերեցին:

(Խնոցի)



ի բան գիտեմ զարմանալի,
Նա մագիլներ ունի հավի,
Մութ անտառն է իրար տալիս,
Հարթում սիրուն ու ետ գալիս:

(Սանր)



ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Հանելուկներ

Դպրոցական կրտսեր տարիքի համար

Нерсес Шнорали

Загадки

Для младшего школьного возраста

(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1984

Խմբագիր՝ Լ. Տ. Սարգսյան
Նկարիչ՝ Ա. Կ. Կարագյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Գ. Սաֆյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Մ. Սիմոնյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Ն. Մինասյան

ИБ № 6075

Հանձնված է շարվածքի՝ 16.01.84: Ստորագրված է տպագրության՝ 28.04.84: Ֆորմատ՝ 70X108 1/32: Թուղթ՝ տպագր. օֆսեթ: Տառատեսակ՝ «Արարատ»: Տպագրություն՝ օֆսեթ: 1,4 պայմ. տպ. մամ., 5,93 պայմ. ներկ. թերթ., 0,55 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 30 000: Պատվեր՝ 2: Գինը՝ 5 կոպ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван — 9, ул. Чаренца, 91.

Հայկական ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան, Երևան—82, Ադմիրալ Իսակովի պող. 48:

Типография цветной печати Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван — 82, пр. Адмирала Исакова, 48.

000832

3940

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0008321

5 կոպ.



„Սովետական գրող"